ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

ք.Երևան
07.01.2022թ.

Ժամը՝ 10:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Հ. Սիմիդյան	Շրջակա միջավայրի նախարար, Խորհրդի նախագահի տեղակալ
Վ. Տերտերյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ,
Ք. Գրիգորյան	Արդարադատության նախարարի առաջին տեղակալ,
Լ. Նանուշյան	Առողջապահության նախարարի առաջին տեղակալ,
Պ. Հովհաննիսյան	Արտաքին գործերի նախարարի տեղակալ,
Ա. Ավանեսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ,
Ռ. Խաչատրյան	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերական նախարարի տեղակալ,
Ա. Խոջոյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ,
Ա. Նազարյան	Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ,
Տ. Ստեփանյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ,
Ա. Մարտիրոսյան	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ,
Ա. Խաչատրյան	Զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ,
Ա. Գուգարաց	Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ,
Ն. Պետրոսյան	Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ,
Ն. Բաղդասարյան	Վիճակագրական կոմիտեի վիճակագրության պետական խորհրդի անդամ,
Կ. Սարգսյան	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
Ա. Մուսախանյան	Ազգային անվտանգության խորհրդի գրասենյակի ներկայացուցիչ,
Ն.Բուդոյան	Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ,
Հ. Ղազարյան	ՄԱԶԾ կլիմայի, շրջակա միջավայրի կայունության թիմի ղեկավար,
Դ. Հարությունյան	ՄԱԶԾ Կլիմայական ծրագրերի համակագող,
Հ. Հակոբյան	ՄԱԶԾ փորձագետ,
Ռ. Հարությունյան	Շրջակա միջավայրի նախարարության քարտուղարության գլխավոր մասնագետ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ներքո, Հայաստանի կլիմայական օրակարգը,
2. Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարավողականության քաղաքականություն, երկրի կողմից ստանձնած հանձնառությունների իրականացման հնարավորությունները, մարտահրավերները և թափանցիկության շրջանակը,
3. Խորհրդի առջև դրված խնդիրների ներկայացում, խորհրդի աշխատակարգի հետ կապված հարցերի քննարկում:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ

Բացման խոսքով հանդես եկավ շրջակա միջավայրի նախարար **Հ.Սիմիդյանը,** նա իր խոսքում նշեց, որ կլիմայի փոփոխությունը միջազգային գործընթացներում դասվում է մարդկության հիմնական մարտահրավերների շարքում՝ մարդկային կյանքի, շրջակա միջավայրի, միգրացիայի և տնտեսական զարգացման վրա բացասական ազդեցության ահագնացող միտումների հետևանքով: Այն հատկապես վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը՝ որպես դեպի ծով ելք չունեցող լեռնային երկրի: **Նախարարն** իր խոսքում նշեց, որ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների համակարգումն իրականացվում էր ՀՀ վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի N955-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական համակարգման խորհրդի կողմից, որն ավելի քան երկու տարի չէր գործում՝ պայմանավորված Կառավարության կազմի և կառուցվածքի փոփոխությամբ: Անհրաժեշտ էր միջգերատեսչական համակարգման խորհրդի կազմը ձևավորել Կառավարության նոր կառուցվածքին համապատասխան: Այս ընթացքում շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և վարչապետի 2021 թ. հուլիսի 6-ի 719-Ա որոշմամբ հաստատվել է «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի կազմը և աշխատակարգը, որով ավելի ընդլայնվել են խորհրդի իրավասությունները, նախատեսելով նաև մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբեր, որոնք թույլ կտան ապահովելու համագործակցություն միջոլորտային հարցերի շուրջ: Խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար բարձրացվել է միջգերատեսչական համակարգման խորհրդի քաղաքական ղեկավարման մակարդակը՝ խորհրդի նախագահի իրավասությունը շրջակա միջավայրի նախարարից վերապահելով փոխվարչապետին՝ հորիզոնական կառավարում ապահովելու համար: Միջգերատեսչական համակարգման նոր խորհրդի ձևավորման անհրաժեշտության մյուս պատճառը Հայաստանի Հանրապետության կողմից 2017 թվականին Փարիզյան համաձայնագրի վավերացումն է, որով առավել հստակեցվել և կարևորվել են Կոնվենցիայի Կողմ երկրների պարտավորությունների կատարման արդյունքները և ընթացակարգերը:

Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ **Ն.Բուդոյանը** ներկայացրեց ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի հիմնական դրույթները, Հայաստանի

Հանրապետության կողմից իրականացվող միջոցառումները և ստանձնած պարտավորությունները կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ներքո՝ մասնավորապես Փարիզյան Համաձայնագրի 4-րդ, 7-րդ 11-րդ և 13 հոդվածները, Եվրոպական միության և ՀՀ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում և դրանից բխող ճանապարհային քարտեզում կլիմայական քաղաքականությանը վերաբերող կետերը: Ստանձնած պարտավորությունների իրականացման գործընթացում կարևորվեց. Երկարաժամկետ ցածր արտանետումներով զարգացման ռազմավարության մշակումը, Կլիմայի մասին օրենքի մշակման վերաբերյալ խորհրդակցությունների անցկացումը՝ սահմանելու երկրում կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը, 2021-2030թթ. Ազգային մակարդակով սահմանված գործողությունների ֆինանսավորման ռազմավարության մշակումը և Չափման, Հաշվետվայնության և Հավաստագրման համակարգի հիմնումը:

ՄԱԶԾ Կլիմայական ծրագրերի համակագող **Դ. Հարությունյանը** ներկայացրեց Փարիզյան համաձայնագրի ներքո երկրի առաջնահերթ խնդիրները ջերմոցային գազերի արտանետումների սահմանափակման և հարմարվողականության մասով, որոնք լիարժեք չեն հասցեագրված ոլորտային ռազմավարություններում: Մասնավորապես տրանսպորտի և բնակարանային սեկտորում արտանետումների կրճատումը, Իրան-Հայաստան էլեկտրաէներգիա-գազի դիմաց համաձայնագրի ազդեցության գնահատումն ածխածնային հետքի առումով, մեթանի փախուստային արտանետումների կրճատումը գազամատակարարման համակարգից, ինչպես նաև վնասի և կորուստի, ինչպես նաև ֆիսկալ ռիսկերի գնահատման մեթոդաբանության կիրառումը հարմարվողականության կարիքների լիարժեք հասցեագրման համար:

Ընդգծվեց թափանցիկության շրջանակի և հավաստագրման գործիքակազմի ձևավորման կարևորությունը երկրի երկամյա զեկույցների մշակման համար, ինչպես նաև Հոդված 6-ի շրջանակներում երկկողմանի համագործակցության և շուկայական մեխանիզմներում Հայաստանի մասնակցության հնարավորությունների լիարժեք իրականացման համար:

Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ **Ն.Բուդոյանը** ամփոփ ներկայացրեց Խորհրդի առջև դրված խնդիրները՝ համաձայն վարչապետի 2021թ. հուլիսի 6-ի 719-Ա որոշման, ներկայացրեց, որ Խորհրդի աշխատանքներին մասնագիտական և փորձագիտական աջակցություն տրամադրելու նպատակով փոխվարչապետի 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 894-Ա որոշմամբ ստեղծվել են երեք մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբեր՝ մեղմման և հարմարվողականության, հաշվետվայնության և ֆինանսական հարցերով: Կայացել են աշխատանքային խմբերի անդրանիկ նիստերը և երեք խմբերում Ն.Բուդոյանն ընտրվել է որպես աշխատանքային խմբի ղեկավար: Խորհրդի քարտուղարության գործառույթներն իրականացվելու է շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության (այսուհետ՝ Քարտուղարություն) կողմից: «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ազգային համակարգող է հանդիսանում շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Աննա Մազմանյանը:

Խորհրդի անդամների կողմից կարևորվեցին հարմարվողականության խնդիրները, մասնավորապես **Վ.Տերտերյանն** առաջարկեց կազմակերպել մարզային հարմարվողա-կանության պլանների քննարկում տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մասնագետների հետ՝ մեթոդական մոտեցումների հստակեցման նպատակով, նշեց նաև, որ 2015թ. GIZ կազմակերպության կողմից իրականացվել էր

Հայաստանի անտառների գնահատում՝ հիմնվելով արբանյակային տվյալների և փորձագիտական ուսումնասիրությունների վրա, և որ ցանկալի է վերանայել այդ ծրագրի նյութերն անտառային ռեսուրսների գնահատման համար:

Ա.Խոջոյանն առաջարկեց համատեղել տարբեր նախարարությունների ջանքերը հողերի և արոտավայրերի գյուղատնտեսական մոնիտորինգի ներկայումս իրականացվող ծրագրի մշակման համար:

Ա.Ավանեսյանը հետաքրքրվեց թե ինչպես են աշխատելու մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբերը:

Ն.Բաղդասարյանը կարևորեց ճիշտ ռազմավարություն մշակելու և ճիշտ քաղաքականություն վարելու համար արժանահավատ տվյալների հավաքագրումը, մասնավորապես տրանսպորտի ոլորտի հետ կապված:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ

Նախարար Հ.Սիմիդյանն առաջարկեց Խորհրդի և մշտական միջգերատեսչկան աշխատանքային խմբերի նիստերն անցկացնել տարվա մեջ հաճախակի:

ՈՐՈՇՎԵՑ

1. Հանձնարարել Քարտուղարությանը՝ մշակել և Խորհրդի նախագահին ու անդամներին ներկայացնել.
   1.1 մինչև 2022 թ. փետրվարի 1-ը երեք մշտական միջգերատեսչական աշխատանքային խմբերի 2022թ. համար նախատեսվող գործողությունների պլանը,
   1.2 մինչև 2022 թվականի հունիսի 1-ը հավաքագրել և Խորհրդի նախագահին, անդամներին ներկայացնել տեղեկատվություն Հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի և 2021-2025թթ. միջոցառումների ցանկով նախատեսված կետերի կատարման ընթացքի մասին:
2. Հաջորդ նիստը նշանակել մյուս եռամսյակում:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ — Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

Արձանագրեց՝
Ռ.Հարությունյանը